ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԿՈՒՄԲՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԵՑ ՄԵՐՁԱՄԱՐՏԻ, ՁԵՌՆԱՄԱՐՏԻ ԵՎ ՄԱՐՏԱՐՎԵՍՏԻ ՍԵՄԻՆԱՐ-ՄԱՐԶՈՒՄՆԵՐ

06.04.2022 19:06

ՀՀ փաստաբանների պալատում շարունակվում են մշակութային և մարզական նախաձեռնությունները:

Մարզամշակութային ակումբը 2022 թվականի ապրիլի 05-ին իրականացրեց մերձամարտի, ձեռնամարտի և մարտարվեստի սեմինար-մարզումներ: Սեմինարն անցկացրեց Ռուսաստանի Դաշնությունից ժամանած ՌԴ և ՀՀ հատուկ ստորաբաժանումների բազմամյա փորձառու հրահանգիչ, մարտարվեստի և բանակային ձեռնամարտի գիտակ՝ Արա Շահնազարյանը:

Միջոցառմանը մասնակցեցին նաև փաստաբանների ընտանիքի անդամներ:

Սեմինար-մարզումները նպատակ ունեին զարգացնելու տարբեր հմտություններ.

- տարբեր իրավիճակներում ինքնապաշտպանվելու և մարտ վարելու հմտություն, մարտական մենամարտերի հնարների կիրառման տեխնիկա՝ մերձամարտ, ձեռնամարտ,
- սառը զենքի՝ դանակ, հրաձգային զենքի՝ ատրճանակ, ինքնաձիգ կիրառման հմտություն,
- ֆիզիկական և հոգեբանական պատրաստվածության համար անհրաժեշտ առօրյա վարժություններ:

ՀՀ փաստաբանների պալատի մարզամշակութային ակումբը նախատեսում է հիշյալ սեմինար-մարզումներն իրականացնել նաև ս.թ. ապրիլի 9-ին, որին մասնակցել ցանկացող փաստաբանները կարող են ներկայանալ առանց գրանցվելու:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })